



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7.925

70



ԱՐԵԲՈԱՆԴՐԱՊՈԼԻՑ  
ՂԱՆԼԻՃԱ

(ՈՒՂԵՒՈՐԻ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

Գ ր ե ց  
Ն . Ք . Ն ի կ ո ղ ո ս ե ա ն

Ա.Ա.Ք Ա Ա Ն Գ Ր Ա Պ Ո Ւ ,  
Տպարան Յակովի Պատաքեանցի

1905

(37)

910-4(Հ. 325)

Հ-70

ՎՃ

Հայաստանի Հանրապետության  
10 NOV 2011


19 10 05 Հ. Գ. Պատճենահանձ  
12 մայ.

# ԱՐԵԲՈՒԺԴՐԱՊՈԼԻՑ ՂԱՆԼԻՋԱՆ

(ՈՒՂԵԿՈՐԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

Գ/

Գրեց  
Նիկողոսեան



1905

(27)

23 APR 2014

ՃՃՃՃ

Дозволено Цензурою. Тифлисъ, 27 Апѣля 1905 года.

I.

Քաղաքների կեանքի ծանըութիւնն ու  
աղմուկը շատ անգամ մարդուն ակամալ գիւ-  
ղերն են մզում, մանաւանդ, երբ մարդը յոգ-  
նած ու թուլացած է ծանը աշխատանքներից:

Գիւղի պարզ օդն ու կլիման, գիւղացու  
պարզ ու միամիտ նիստ ու կացը, ճիշտ որ  
գրաւիչ են, մանաւանդ, երբ նրանք կապ  
ունին պատմական անցեալի հետ, որտեղ կան  
գեղեցիկ յուշեր պատմական անձնաւորու-  
թիւնների մասին, այլ խօսքով ասած, որտեղ  
կան հնութեան բեկորներ, որոնք իրանց տը-  
խուր տեսքով վկայ են տիսուր անցեալի, իրանց  
կառուցողների մեծագործութեան:

Սիրում եմ գիւղն ընդհանրապէս, սի-  
րում եմ գիւղացուն իւր առօրեալ չա-  
րաքաշ աշխատանքով: Ահա այդ սէրը շատ  
անգամ քաշում, ձգում է ինձ գիւղերը, տես-

նելու, ալցելելու գիւղացուն և նրա ցաւերով  
զբաղուելու, տանջուելու:

Գիւղ և գիւղացի հասկացողութիւնը ա-  
մենեին այն չէ մեզանում, ինչ որ տեսնում  
ենք եւրոպական կեանքից վերջրած սիրուն  
պատկերների մէջ: Այստեղ արհեստն ու գի-  
տութիւնը միացած, ձեռք ձեռքի տուած՝  
հեշտացրել և նոյն իսկ նախանձելի են դարձ-  
րել գիւղացու կեանքը քաղաքացիների աչ-  
քում, իսկ մեզանում, զուրկ այդ միջոցնե-  
րից, կեանքը վերջին ծալր անտանելի է  
դարձել, թողնելով գիւղացուն վայելելու մի-  
այն պարզ օդ և առողջաբար ջուր: Եւ միայն  
այդքան....

Աղէքսանդրապօլին աւելի մօտ են Ղան-  
լիճա գիւղերը, որ պատմութեան մէջ լայտնի  
էր Մարմաշէն անունով, հնումը Պահլաւու-  
նի իշխանների կալուածը: Մինչև այժմ կան-  
դուն են Պահլաւունիների գեղեցկաշէն վան-  
քերը, որտեղ և գտնուում է քաղաքացոց  
լայտնի «Կարմիր աւետարանը», որին ամեն  
կերակի ուխտաւորներ են գնում:

Ամառուայ արձակուրդ օրերից մէկն էր:  
Մի փոքր ազատ օդ ձեռլու համար, վճռեցի  
Ղանլիճա դնալ: Զիու մասին հոգալն աւելուրդ  
էր, որովհետեւ մանկութիւնից վարժուել եմ  
շատ հեռաւոր ճանապարհներ ոտքով գնալու,

իսկ այս տարածութիւնը հազիւ թէ 6—7  
վերատ լինի: Առաւոտը վաղ վեր կացալ և  
ըսնելով գիւղի ճանապարհը, որ գտնուում է  
քաղաքի հիւսիս-արևմտեան կողմը, առաջ  
գնացի: Հազիւ թէ քաղաքից դուրս էի եկել,  
տեսնեմ մի մարդ գնում է նոյն ճանապար-  
հով, խուրջինը ուսին դրած: Երեսում էր որ  
նա ինչ որ բան էր գնել տան համար: Երբ  
նա ինձ մօտեցաւ, հարցրեց.

—Ուր առաջ բարի, ալսպէս վազ ուր  
էք գնում:

Գնում եմ Ղանլիճա, մի փոքր ման գալ  
ուզեցի, շատ եմ սիրում ման գալ:

—Ես էլ զանլիճեցի եմ, լաւ որ պատա-  
հեցինք, ուրեմն իսուելով կըզնանք և ճանա-  
պարհի երկարութիւնը չի զգացուի: Իշարկէ  
նստակեաց մարդու համար մի-մի անգամ ման  
դոլը օգտակար է, —վրաբերեց գիւղացին:

—Կարծում եմ որ ձեր առողջութիւնը  
դլիսաւրապէս բաց օդում աշխատելուցն է,  
եթէ ոչ մենք աւելի լարմարութիւններ՝ ու-  
նինք քաղաքում, բայց այնուամենալինիւ, հի-  
ւանդուտ ենք:

—Անկասկած, ծանր աշխատանքը, որ  
գիւղացու բուժինն է, նրան կըմաշէր, եթէ  
գիւղի օդն ու ջուրը չըլինէր. քաղաքներում  
թէև հանգիստ է կեանքը, բայց քաղաքացի-

ներդ փակուած ու անշարժութեան դատապարտուած լինելով՝ կորցնում էք առողջութիւններդ:

Խօսակիցս բաւական խելացի մարդ էր երեսում, չնայելով արևի առաջ խանձուած գէմքին, նա ունէր համակրելի գիմագծեր, միջահասակ էր, սեալեխառն մօրուքով:

— Ի՞նչպէս է ձեր անունը, հարցը նըրան: Անունդ ինդրեմ ինձ բաշխես: Այս լուչէ, որ միասին գնանք, և անունդ չիմանամ:

— Անունս Գալուստ է, բայց գիւղացիք պարզութեան համար Գալօ էլ են ասում:

— Միթէ Գալուստ անունը պարզ չէ, որ աւելորդ տեղը կը ճատառմ են:

— Դէ, ես ինչ գիտեմ, սովորութիւն է կը ճատելը: Այդ խօսք քաղաքում էլ են անում:

— Ճշմարիտ է, անսունների կը ճատելն ընդհանուր է, շատ անգամ այնքան է փոփոխում անունը, որ մարդ գժուարանում է իմանալ իսկական խօսքի արմատը: Դու այն ասա, Գալուստ եղբայր, ալգ ի՞նչ ես գնել:

— Տան համար մի քիչ կտորեցէն գնեցի: Թէև աշխատանքի ժամանակ էր, միջոց էլ չըկար քաղաք գալու, բայց ի՞նչ արած, երեխաները մերկ էին, վրանները պատառուառել էին:

Մի փոքր ժամանակ լուսութեամբ շարունակում էինք ճանապարհներս: Ուղեկի-

ցըս բաւական փորձուած, պարզասիրտ մարդ էր երեսում և խօսելու տրամադիր: Հանգամանքից օգտուելու համար, ուզեցի գիւղացու կարծիքն իմանալ քաղաքացի վաճառականների մասին, ուստի հարցը նրան.

— Գալուստ եղբայր, ես գիտեմ, որ տարուայ այս ժամանակ գիւղացու մօտ փող չի գտնուիլ, եթէ չես նեղանալ, ասա ինձ, գնածը կտորները առձեռն փողով առար, թէ ապառիկ:

— Նեղանալու ոչինչ չկայ: Իհարկէ, ալժըմ գիւղացու ձեռքին փող չի լինիլ, ապառիկ եմ գնել: Գոհութիւն Աստուծոյ, հաւատարմութիւն կայ: Քաղաքում ամենքը ճանաչում են տիրացու Գալուստին: Նրանք տալիս են ապառիկ, վստահ լինելով՝ որ ժամանակին կը վերադարձնեմ:

— Բայց միթէ ձեռնտու է ձեզ համար ապառիկ գնելը:

— Խօսք չկայ որ ապառիկ վերցնելը օգտակար չէ. միթէ ալգ միեւնոյնը քաղաքացիներիդ ձեռնտու է, որ մեզ նման տգէտ գիւղացուն ձեռնտու լինի. բայց ի՞նչ արած, երբ կարիք կայ, ստիպուած ենք գնելու: Ես լուգիտեմ, որ առածս լիսուներկու բուբլու ապրանքի մէջ վաճառականը հինգ տասը բուբլի աւելորդ հաշուեց. եթէ ձեռքս փող

լինէր, կ'ընկնէի խանութէ խանութէ և ով աւելի էժան կըտար, նրանից էլ կըզնէի: Արի տես որ փող չըլինելուց, գնում կանգնում ենք զգերս ծուռ վաճառականի առաջ, թողնելով նրա խղճին: Խակ նա ալսպիսի դէպքերում օգտում է հանգամանքից: Ասենք նա էլ մարդէ, մեղաւոր չէ: Նա էլ մտածում է, որ իւր ապրանքը մի քանի ամիս պէտք է վրաներս մնայ: Խոմ թարէքներում շարուած ապրանքը բոլորն իրանը չէ, անկասկած նա էլ դրանց համար շահ է վճարում, միւս կողմից պէտք է տուն պահէ, խանութի վարձ վճարէ և ալին և ալին, ահա ալդ հաշով էլ ապրանքը ծախում է մեզ վրայ:

— Լաւ ես գատում, նրանց դրսւթիւնն էլ նախանձելի չէ, նքանց ցաւերը ներսն է թագցրած և ծախսերն էլ տեսակ-տեսակ են: Միայն թէ վերցրած շահը չափաւոր լինի:

Այդ էլ մարդուց է կախուած, ասաց իմ խօսակիցը: — Անխիճն մարդու մօտ մէկ գնացինք, մէկ էլ չենք գնալ: Ալդպիսին լետոյ ինքը պէտք է մեր յետելից ման գալ, որ մեծ դժուարութեամբ առնելիքն ստանայ: Իզուր չէ ասուած, թէ վնաս տւողը առաջ ինքը կըվնասուի: Տարիներ տուղը քաղաքում կալին միքանի առեւարտականներ, որոնք գիւղացիների կաշին էին քերթում,

մեծ-մեծ տոկոս վերցնելով. Նըտնք շատ աշխատելու լուսով՝ աջ ու ձախ գիւղացիներին ապրանք բաց թողին, այդպիսով իրանց բոլոր ունեցածը ապառիկ գնաց. իսկ լետոյ էլ չկարողացան հաւաքել ու սնանկացան: Եթէ ալժմ էլ քաղաքի մէջ կան վաճառականներ, որոնք օձիք են թափ տալիս գիւղացու երեսից, այդ պէտք է բացարել իրանց անխիճն վարմունքով. գրանք դիւզացուն ապրանք ծախելիս՝ մի քանի տեսակ են խաբել, զինը բարձր են տօել իսկական արժէքից, արշինի մէջ պակաս են չափել, փողի տոկոսը մի քանի անգամ իրար վըրայ բարգել: Միամիտ գիւղացին մի անգամ նրա ծուզակն ընկնելուց յետոյ, հնար չէ ունեցել պարտքից ազատուելու. տուել է ու տուել, իսկ լետոյ, երբ ալլես ոչինչ չէ ունեցել տալու, չէ տուել. ալդպիսով շահն էլ, գլուխըն էլ կերել է: Ալժմ քաղաքում վաճառականներն աւելի զգուշ են թէ տալսւ և թէ՝ տունելու մէջ: Նըտնք տալիս են իրանց լաւճանաշած մարդուն, իսկ ում էլ որ չեն ճանաչում, նրա համար ծանօթ մարդն է երաշխաւոր դառնում և ապա թէ մուրհակ վերցնում:

— Մուրհակ տւողը ճշտութեամբ վերադրձնում է պարտքը, — հետաքրքրուեցի ես:

— Ուշանալ կալ, ասած է, ուրանալ չկալ,  
— ընդհատեց նա: Մուրհակով փողը չի կոր-  
շիլ. բայց Աստուած չանէ, որ մարդ ուրիշի  
փողն ուզենալ ուրանալ, կան և ուրանալու  
ճանապարհներ:

— Ի՞նչպէս, հարցրի նորից:

— Եթէ քաղաքացին վարպետ է, գիտէ  
իւր գործը ամուր բռնել, ինչու կար-  
ծել թէ գիւղացին միամիտ է, նրանից  
յետ կը մնայ, Բարքերը փոխուել են: Այ-  
ժը առաջուալ գիւղացին չկայ: Այժմ ե-  
թէ գիւղացին ուզենալ ուրանալ, նա կը գտնի  
իւր նման մի երկու ընկերներ, նրանց  
արադ կը խմացնէ, որոնք յետոյ գտարանում  
խաչի ու աւետարանի առաջ կ'երդուին, թէ  
գիւղացին պարտքը վճարել է վաճառականին  
իրանց ներկալութեամբ, բայց վերջինս մա-  
տեանում չէ ջնջել ու նորից է պահանջում:  
Եթէ այս միջոցն էլ չ'օգնէ նրան, խօսք կը-  
տալ պարտքը վճարել, իհարկէ գտարակ խոս-  
ում այնուհետև պարտատերը թող հա-  
րիւր անգամ գիւղ գայ ու գնայ, թող գործից  
յետ ընկնի առնելիքի համար: Եթէ պարտա-  
տերը ճարպիկ է, գոռալով, հայհոյելով կա-  
րելի է պարտապանից մի բան ստանայ, իսկ եթէ  
պատուատէր կամ խեղճ մարդ է, գիւղացին  
նրա առնելիքը մօր կաթի պէս անուշ կ'անէ:

— Տիրացու Գալսւստ, պատմածներիցդ  
գույս է գալիս, որ գիւղացու հետ գործ ու-  
նենալը երկիւղալի է:

— Այդպէս էլ կարելի է ասկոնալ, բայց  
ոչ, ով ուզում է գիւղացու մասն ունե-  
նալ, պէտք է բարեխիզձ լինի: Շիւղացին էլ  
մարդ է, առանելով գիմացինի վարմունքը,  
այնպէս էլ կը վերադարձնէ: Բայց կայ մի այլ  
միջոց: Լսած կը լինիս—կեղծաւորութիւնը—  
կէս առաքինութիւն է: Եթէ ջան ու սիրա-  
լիր խօսքերով գիւղացու հետ խօսես, կարող  
ես գիւղացուն բռիդ մէջ պահել: Կան այն-  
պիսի մարդիկ, որոնք գործի սկզբում հազիւ-  
թէ հարիւր ըուբլի են ունեցել և այդքան  
փողով գիւղացու հետ առեւտուր սկսելով, այ-  
ժը լաւ փողի տէր են գարձել: Նվանք գիւ-  
ղերում պատուաւոր մարդկանց հետ կապեր  
են ստեղծում, «քաւոր-սանահար» գառնում,  
ամեն անգամ նրանց քաղաքում պատիւներ  
են տալիս, թէլ, արադ խմացնում, իսկ նրանց  
միջոցով իրանց գործը հոգում:

— Իսկ ովքեր են գիւղի պատուաւորները:

— Գիւղում պատուաւոր են համարւում  
Եշխանները-Հարուստները, տանուտէրը, պրիս-  
տաւը, գատաւորը, գրագիրը: Բաւական է  
սրանց թոյլ կողմը գտնել, ինքնասիրութիւ-  
նը շոյել, նրանք այնուհետև կըդառնան անձ-

նուէր, հաւատաբիմ ծառաներ: Օրէնք, կարգ,  
իրաւունք կախուած են նրանց մտըակի, ոլ-  
ժի վրայ: Եթէ նրանք գործում են քաղաքա-  
ցի վաճառականի օդտին, էլ ոչ ոք նրան չի  
համարձակւում նեղացնել, գիւղացու շապիկը  
կըծախեն և մի բան էլ աւելի կըփճարեն  
քաղաքացի պարտասիրոջը:

— Երեխ գիւղացին մտըակից աւելի՝ է  
վախենում, քան թէ խզից: Գալուստ եղբայր,  
գու շատ վատ կողմից ես խօսում գիւղացի-  
ների մասին, քան թէ ես գիտեմ: Ի՞նչպէս  
բացատրենք ալդ:

— Յաւալի է, ալճ, երբ մասդ մէկի մա-  
սին լու կարծիք ունի, բայց յանկարծ վատ  
բան է լսում, այնպէս չէ: Ալդ նրանից է  
առաջանում, որ մարդիկ աւելի շատ արտա-  
քինով են գատում, մինչդեռ մօտիկ ծանօթու-  
թիւնը տարբեր եզրակացութեան կըհասցնէ:  
Աերցնենք օրինակ քեզ, խոմ կարդաւոր մարդ  
ես, գիւղացու հասկացողութեամբ օծեալ  
Տեառն կըկոչուիս: Հաշուենք թէ եկել ես  
մեր գիւղը և անձանօթ լինելով, գու առա-  
ջարկում ես, որ տան քեզ մի ձի, մի երկու  
վերստ գնալու համար: Գիւղացիները տանը ձի  
էլ ունենան չեն տալ, որքան և գու շտայ  
գործ ունենաս, որքան և խնդրես: Բաւական  
չէ որ չի կատարւում ինդիրդ, նո կոպիտ կերպով

էլ քեզ վիրաւորում է: Բոլորովին գըա հակա-  
ռակը կըտեսնես, երբ գիւղ է մտնում մի պրիս-  
տաւ, կամ մի գրագիր: Եթէ նրանք նման պա-  
հանջ ունենան ու գիւղում ձի էլ չըճարուի,  
մարդ կ'ուղարկեն մօտիկ գիւղից կըբերեն և  
անվարձ կըտան «աղալին» հեծնելու:

— Զարմանափ չէ ալդ երևոլիթը, վերջին  
գէպքում նրանք կարծում են, թէ օրէնքի  
պահանջն են կատարում, — կտրեցի նրա  
խօսքը:

— Ոլո՛, մասամբ ձիշտ է նկատողու-  
թիւնդ: Գիւղացին չըգիտէ մարդուն պատ-  
ուել իւր արժէքի համեմատ: Նա լու գիտէ,  
որ պըիսամւին պարտական չէ, բայց կանէ,  
որովհետեւ նրանից վախենում է:

— Տգիտութեան հետեւանք է: Տգէտից  
պահանջնել չի կարելի, կըկնեցի ես:

— Տգիտութիւնը անուրանալի է: Գիւ-  
ղացիներս խուար ծնւռում ենք, խաւար էլ  
մեռնում: Քաղաքներում քանի քանի ու-  
սումնաբաններ կան: Մանկութիւնից մարդիկ  
սովորում են, կըթւում ու լուսաւորւում, ի-  
հարկէ, որ քաղաքավարութիւն էլ կըսովորին:  
Զեր տղաներն առաւոտը ուսումնաբան են  
վագում, բան սովորում, իսկ մեր տղաները  
ի՞նչ պէտք է սովորեն մեղանից: Զմեռը  
գոմի օդաներում հեքիաթներ, իսկ տարուայ

միւս եղանակներին դաշտում հոտաղ ու մշակ  
են դառնում տաւարի յետևից քաշ գալիս:

— Զգում էք ուսման պահանջ:

— Զգում ենք:

— Իսկ ինչու չէք բաց անում ուսում-  
նարան:

— Որովհետեւ գիւղում համաձայնութիւն  
գժուար է կալացնել: Ուսումնարանը մե-  
զանից ծախսեր կըպահանջի: Ծախսը պէտք  
է գիւղի հասարակութիւնը հոգալ: Երեխայ  
ունեցողները ուրախութեամբ յանձն են առ-  
նում իրանց վրայ գրած ծանրութիւնը, իսկ  
չունեցողները չեն ուզում ծախսին մասնակ-  
ցել, ասելով, մենք երեխայ չունինք, ի՞նչ  
պարտական ենք: — Քաղաքներում չէ որ այդ  
բանը չկալ:

— Իհարկէ: Նշանակում է այդպիսով դուք  
երբէք ել ուսումնարան չէք ունենալ,  
— ասացի եօ:

— Ունեորները տեսնելով գիւղի անհա-  
մաձայնութիւնը, ուսումնարան չեն բաց ա-  
նում, բայց իրանց տղաներին մի կերպ կար-  
դալ սովորեցնում են, յանձնելով զանազան  
խալֆաների, որոնք նրանց սովորեցնում են  
զոմի օգաներում:

— Իսկ ո՞րքան են սովորում աշակերտները:  
— Որքան հանգամանքը կըներէ: Եթէ

վարժապետը երկար մնաց գիւղում, նրանք  
մինչեւ ցանքսի ժամանակ սովորելով, գիրկապ  
անելով կսկսեն կարդալ, մի քիչ էլ գրել ու  
հաշուել:

— Ասել է թէ գիւղում այնուամենալիւ  
քիչ թէ շատ գրագէտներ կըլինին:

— Որոնք որ եկեղեցում դպրութիւն են  
անում, նրանք բաւական առաջ են գնում,  
իսկ մնացածները նուիրուելով գիւղական պա-  
րապմունքներին, սովորածներն էլ մոռա-  
նում են:

— Գիւղում ազատ ժամանակ գրքեր կամ  
լրագիր կարգում են, գրանք շատ կօգնեն ինչ-  
պէս գրավարժութեան, այնպէս էլ կրթու-  
թեան:

— Լրագիր, ոչ, բայց գլքեր ել սակաւ  
են ճարւում, եղածներն էլ չնչին բովանդա-  
կութեան հէքիաթներ են:

— Լսել եմ, որ ժողովուրդը հէքիաթ-  
ներ շատ է սիրում:

— Ոյն, հէքիաթներ, որոնց մէջ սէրը  
կամ հերոսական գործերը մեծ տեղ են բըռ-  
նում, գրանք կարդացւում են ձմեռուայ ա-  
զատ օրերը, և երկար գիշերները:

— Ուրիշ բովանդակութեան գրքեր չեն  
կարդացւում:

Եթէ լինին, ինչու չէ. բայց ով կըտայ

ինեղծ գիւղացուն ալդպիսի գրքեր։ Հէքիաթն  
ները մի կերպ գնում են։

— Թո՞ղ ուրիշ գրքեր էլ գնեն։

— Հէքիաթների բովանդակութիւնը նը-  
րանք բերտնացի գիտեն, ուստի և ցանկու-  
թիւն ունին կարգալու, բայց միւս գրքերի-  
նը չգիտեն։ Իսկ անյալտ, անձանօթ գրքին  
փող չեն տալ։ Զկան բարի մարդիկ, որ գիւ-  
ղերում գրագարաններ հիմնեին։ Անկասկած  
լաւ-լաւ գրքեր կարգալով առաջ կըզնալինք։

Ես սկսեցի մի քանի գրքերի կարճ բո-  
վանդակութիւններ տաել. խորհուրդ տուի  
լրագիր ստանալ և մասնաւորապէս ցոյց տուի  
թէ որքան անհրաժեշտ է գիւղացուն տեղե-  
կութիւններ ունենալ գիւղատնտեսութեան,  
անասնապահութեան մասին։

Իսկ երբ իսուքը առողջապահական խընդ-  
րին գարձաւ, խօսակիցա տաեց։

— Լաւ բան է առողջութեան մասին  
հոգալը։ Առողջապահական կանոններ չիմա-  
նալուց, գիւղացիներս սունկի պէս բուսնում,  
ծաղկի-խոտի պէս թառամում ենք։ Մեր կեան-  
քը կապուած է պատահականութեան հետ.  
Եթէ որևէ կերպով հիւանդանում ենք, գի-  
մում ենք զանազան անտեղի միջոցների, էլ  
զըբաց ասես, էլ մաղպալուցնել, էլ զանազան  
կախարդութիւններ ասես, անում ենք, որ

հիւանդը առողջանալ։ Գիտես թէ որքան նա-  
խապաշարմունք կալ մեր մէջ, ոչ դեղ ու-  
նինք, ոչ դարման։

— Բայց ինչու բժշկի չէք գիմում, չէ որ  
բժիշկը կարող է առողջացնել հիւանդներին։

— Բժիշկը մեր մէջն է որ գիմենք։ Ծայ-  
րայեղ դէպքերում գալիս ենք քաղաք բժիշկ  
հրաւիրելու. բժշկի ճանապարհածախոը, այց-  
վճարը և դեղը նստում է 10—15 րուբլի։  
Քաղաքի պէս չէ, որ տասնեակ բժիշկներ գըտ-  
նենք, շատ անգամ նրանք մերժում են, չեն  
գալիս, իսկ եկած դէպքումն էլ ազպէս թանգ  
է նստում։ Ա՛րժէ քաղաքում ապրել. գիւ-  
ղացին ամեն կողմից է զրկուած։

— Թո՞ղ մի քանի գիւղեր միացած ոյժով  
բժիշկ պահեն, նկատեցի ես։

— Որին ամենաքիչը վճարեն 1200—2000  
րուբլի, այնպէս չէ, հեգնեց ինձ գիւղացին։

— Կարծում եմ այդ փողը մի գիւղի հա-  
մար շատ-շատ է, բայց մի քանի գիւղի հա-  
մար մի մեծ բան չէ, եթէ ուզում էք առողջ  
մնալ և հիւանդութեան դէպքում էժան  
պլծնել։

— Այո՛, շատ բան կարելի էր անել առողջացներին  
նորութիւններ մտցնել մեր կեանքնին գույշ  
անող չըկալ։



Գիւղական կեանքի չար ու բարու մասին  
խօսելով, մենք բաւական առաջ էինք գնա-  
ցել և երբ աչքերս վեր բարձրացրինք, զգա-  
ցինք մեզ «Կարմիր մարտկոցի» մօտ: Ես գոհ  
էի պատահմունքից: Ուղեկից-ընկերս փոր-  
ձուած էր, խելօք ու առողջադատ: Նա իրան  
անուանում էր հասարակ տիրացու, բայց ինչ-  
պէս երեւում էր քաղաքում շատ մարդկանց  
հետ շփուելով, կեանքի երեսիթները գիտէր  
քննադատել, նրանց մասին ունէր իւր սեպ-  
հական անշեղ համոզմունքները, ինձ համար  
պարզուեցին մի շարք ինդիրներ, որոնց մա-  
սին ստոյգ տեղեկութիւններ չունէի: Տգէտ  
գիւղացին իւր բոլոր թերութիւններով աւելի  
բարձրացաւ իմ աչքում: Եթէ նա այդ բոլոր  
եզրակացութիւնները միայն սեպհական դիտո-  
ղութիւններով է ձեռք բերել, որքան աւելի  
ընդունակ կըլինէր նա, եթէ կըթուէր: Նրա  
գործնական խելքին կ'աւելանար տեսականը,  
եթէ նա էլ մեզ պէս միջոց ունենար ուսում-  
նարան մտնելու, սովորելու: Դեռ շատ բաներ  
ունէի նրան հարցնելու. համոզուած էի, որ  
նա մի առ մի ցոյց կըտար գիւղացու վերքերը,  
որոնց բուժելու, գժբախտաբար ես անկարող էի:

Մենք քայլում էինք մեքենայաբար: Մեր  
խօսակցութիւնն յանկարծ ընդհատուեց եր-  
կու հայ զինուորների յայտնուելով: Նրանք  
դուրս եկան մարտկոցի մօտերից և գնում  
էին գէպի դաշտի վրանները: Հասնելով մեր  
մօտ, նրանք յարգանքով բարեեցին մեզ:  
Ես սկզբում նրանց չըճանաչեցի, բայց շուտով  
իմացալ, որ նրանք իմ նախկին աշակերտնե-  
րից են եղել: — Մեզ չես ճանաչում, միանդամից հարց-  
ըին նրանք ժպտալով:  
— Ո՛չ, ի՞նչպէս ճանաչեմ:  
— Որանից տասը տարի առաջ դաս ես տու-  
ել մեզ: Մենք քո նախկին աշակերտներն ենք,  
չես յիշում մեզ: Հեռուից որ ձեզ տեսանք,  
մտքերիցս անցաւ թէ մոռացած կըլինի:  
— Տասը տարի առաջ... բաւական միջոց է  
ալդ, — այն ժամանակ դուք երեխաներ էիք,  
դպրոցական շորերով, անմազ, անմորուս: Տա-  
սը տարին թէւ շուտ կանցնի մարդու կեան-  
քից, բայց մարդն այնքան կըփոխուի, որ կա-  
րող է իսպառ մոռացուել: Դուք կարող էք  
ինձ չմոռանալ, որպիշետև տեսել էք ինձ այլ-  
ական հասակում, երբ գէմքիս գծերը կըմնան  
երկար: Կարող էր փոխուել միայն հագուստս.  
այն ժամանակ աշխարհական էի, իսկ այժմ  
հոգեորականի շորեր ունիմ հագած: Այն ի՞նչ

տասը տարուալ ընթացքում ձեր մէջ կատար-  
ուած փոփոխութիւնը շատ ու շատ մեծ է,  
հասակներդ առել, լցուել, մեծացել, դէմքերդ  
մազով ծածկուել և յանկարծ դաշտում հան-  
դիպում էք ինձ զինւորական համազգեստով:

— Բայց մենք քեզ միշտ լիշում ենք, Մինք  
Աստուածածնի դպրոցի սաներն ենք, դու մեզ  
հայերէն և թուաբանութիւն էիր աւանդում:

— Կարելի է, այո՛, ինձ թւում է թէ ձայ-  
ներդ ծանօթ են, իսկ անուններդ չեմ լիշում:  
Ասացէք ուրեմն ձեր անունները:

— Մանուկ Պետրոսեան ասաց առաջինը:

— Գրիգոր Մինասեան, կրկնեց երկրորդը:

— Ուրեմն այդ դուք էք, Այո՛, Բնչպէս  
թոյլ է լիշողութիւնս դէմքեր մտաբերելու  
համար:

— Իրաւունք էլ ունիս ըլիշելու, ասաց  
Պետրոսեանը: Երկար տարու սւսուցութեանդ  
շրջանում հարիւրաւոր աշակերտներ ես ու-  
նեցել, որին լիշես:

Այսպէս թէւ մի փոքր ուշ, այնուամենայ-  
նիւ, անցեալի քաղցր յուշերն իմ մէջ զար-  
թեցին: Ժամանակի հետ թէւ աղօտացել էին  
անցեալի դէպքերը, սակայն դժուար չեղաւ  
նրանց վերստին լիշելը: Տասը և աւելի տա-  
րիներ առաջ, նախկին հայկական դպրոցնե-  
րում հայ ուսուցիչներս աշխատելով՝ կաշուց

գուրս էինք գալիս: Այն ժամանակ ուսուցիչ-  
ներս աշխատում էինք սովորեցնել հայ երե-  
խաներին որքան կարելի է շատ: Ոչ առող-  
ջութիւն էինք հարցնում և ոչ հանդստու-  
թիւն: Պարապում էինք սահմանուած ժամե-  
րից աւելի, որովհետև սովորողները մեր հա-  
րազատներն էին: Թոնք, ասում էինք, առաջ  
գնան, մարդ դառնան, որ նրանց լիշողութեան  
մէջ քաղցր տեղ ունենանք: Այժմ անակնկալ  
պատահմունքը հարիւրաւոր աշակերտներից  
երկուսին է հանդիպեցնում, որոնք ինձ լի-  
շում են և լիշել են տալիս անցեալը: Սիրտս  
ուրախութիւնով լցուեց: Այն օրից մինչեւ  
այժմ առուից շատ ջուր է անցել, շատ բաներ  
փոխուել. Նախկին աշակերտները չկան, ինչ-  
պէս և չկան նախկին դպրոցները: Մանուկն  
ու Գրիգորը յառաջադէմ, ընդունակ ու կեն-  
սուրախ տղաներ էին: Փոքր հասակում նրանք  
ինձ շատ էին նեղացնում, բայց և այնպէս  
նրանց մեղքը ներւում էր, որովհետև եր-  
կուսն էլ սովորողներ էին: Այդպիսի աշակերտ-  
ները ուսուցիչների կողմից միշտ գուրգուրանք  
էին վայելում: Մասնաւորապէս իմ հասակի  
եռանդուն ժամանակն էր: Ամբողջապէս գոր-  
ծին նուիրուած՝ շուրջս նայելու միջոց չու-  
նէի: Այն ժամանակ բոլորովին ինքս ինձ մո-  
ռացած՝ ողջ էութիւնս ամփոփել էի աշա-

կերտների մէջ. նրանց հետ խնդում, նրանց հետ մխիթարում էի: Ես ոչինչ չէի խնայում նրանց համար և՝ սիրտ և՝ եռանդ: Կեանքի մեծ հասակներում կուզէի նոյն աշակերտներին առաջնորդ լինել, սակայն կեանքն անողոք է, հաւաքումներ չի սիրում: Պալրոցից դուրս գալով, աշակերտները լցւում էին հասարակութեան շարքերը և հազիւ էր պատահում, որ մէկ-մէկ անգամ առիթը պատահելիս՝ նրանց հանդիպէի նրանց, հետ խօսէի:

Իմ նախկին աշակերտներին ալսպէս անսպասելի կերպով հանդիպելով՝ մոռացայ գիւղն էլ, գիւղացին էլ:

— Քանի տարի է ծառայութեան մէջ էք, հարցրի նրանց:

- Երկրորդ տարին է, — ասաց Գրիգորը:
- Որտեղ է ձեր ծառայութեան տեղը:
- Գրոզնով, Վլատիկաւկազի մօտերը:

Գիտեմ, ոչինչ, Կովկասից հեռու չէ: Կարծեմ տեղի գրութիւնը վատ չէ:

— Այո՛, լաւ է, խօսեց Մանուկը: Ինձ ըսկգբում ուզեցին աւելի հեռու տեղ ուղարկել, բայց չուզելով Գրիգորից բաժանուել, խնդրեցի որ միասին մի տեղ նշանակեն: Լաւ է, խնդիրս յարգեցին և մենք այժմ ծառայում ենք միևնուն վաշտի մէջ:

— Ծառայութիւնը խոմ ծանը չէ:

— Սկզբում մի փոքր դժուար էր, բայց դժուարութիւնը առաջին վեց ամիսն էր, երբ դեռ չգիտէինք հրացան գործ ածել, երբ գօրախաղերն անծանօթ էին, իսկ ընտելանալուց յետոյ գործը հեշտացաւ:

— Ծառայութիւնը չէ մեզ նեղողը, — վրայ բերեց Գրիգորը, հայրենիքի կարօտն է մարդուս մաշում: Ամեն երեկոյ անուններս կարդալուց յետոյ, երբ գնում ենք քնելու, մենք շարունակ խօսում ենք մեր քաղաքի, ծնողների, բարեկամների մասին: Նատ անգամ ալնքան ենք խօսում, որ քներիս մէջ երազներ ենք տեսնում: Այդ երազները երբեմն լինում են ուրախ, հանգստացնող, իսկ երբեմն ալնպէս տիսուր, որ հետեւալ ամբողջ օրը սրտերս լցւում են կասկածներով, սև մտքերով:

— Երազին ինչի՞ էք հաւատում:

— Զի կարելի չըհաւատալ, երբեմն նրանք ուղիղ են դուրս գալիս, — ասաց Մանուկը: Մի գիշեր երազում տեսալ, որ մեր տանը ուրախութիւն կալ, մարդիկ են հաւաքուած, տեսալ նրանց մէջ և քահանալ: Իհարկէ, ես չէի հասկանում երազս, բայց մի շաբաթից յետոյ տանից նամակ ստացայ, որ քրոջս նշանել են:

— Հայրենիքի սէրը այնու ամենայնիւ մեր

տրամադրութիւնը չի փչացնում, մեր օրերը  
ուրախ են անցնում: Մենք ունինք ուրախա-  
նալու պատճառ: Դուք երեխ կըյիշէք, որ  
դեռ ուսումնարանում սովորում էի սրինգ  
ածել: Յետոյ էլ առանձին պարապեցի, և  
հիմա լու ածել գիտեմ: Ազատ ժամերիս,  
հայ տղերքս միասին ենք հաւաքւում, ես  
սրինգով «Եալի» եմ ածում, Մանուկը թըմ-  
բուկ, ու բոլոր վաշտը հաւաքում ենք մեր  
շուրջը, ածում ենք, պարում, մենք էլ ու-  
րախանում, նրանց էլ ուրախացնում:

— Յիշում եմ երկուսդ էլ մանկութիւնից ու-  
րախ ընաւորութիւն ունէիք: Տիուր օրերին  
երգն ու երաժշտութիւնը թեթևացնող մի-  
ջոցներ են: Օրէ, պէտք է անցնի, թող ու-  
րախ անցնի: Կեանքի ծանրութիւնները միայն  
ուրախ մարդիկ կարող են տանել:

— Փորձուած բան է, տիուր մարդը շուտ  
կըթուլանայ, կըմաշուի, — ասաց Մանուկը:  
Մեր վաշտի մէջ շատերը կան, որոնք միշտ  
մոալլ, անիսոս և ընկճուած տեսք ունին:  
Շատ անգամ նկատել եմ, որ նրանք առան-  
ձին եղած ժամանակ լաց են լինում. խեղ-  
ճերն այնքան լուսահատ են, որ կարծես հայ-  
րենիքի երես էլ չպէտք է տեսնին: Զէ, էլի  
ուրախ լինելը լաւ է:

— Եւ շատ էլ հիւանդանում են, վրայ բե-

րեց Գրիգորը:

— Այն ինչ մենք ո՞չ մի օր էլ չենք հի-  
ւանդացել, շարունակեց Մանուկը:

— Ինչու ես սուտ ասում, ծիծաղելով կըտ-  
րեց Մանուկի խօսքը ընկերը, ապա չես լի-  
շում, երբ երկուսս էլ մի շաբաթ պարկեցինք  
հիւանդանոցում:

— Բայց խօմ հիւանդ չէինք:

— Ի՞նչպէս, — նկատեցի նրանց:

— Մենք տեսնում էինք, որ ոռւսներից մի  
քանիսը դատարկ պատճառներով ծառայու-  
թիւնից փախչում էին, ու սուտ հիւանդ  
ձեւանում: Մի օր էլ, երբ մեր հերթն էր ծառա-  
յութեան, մտածեցինք երկուսս էլ հիւանդա-  
նալ և մի շաբաթ հիւանդանոցում մնացինք:  
Խսկապէս զինւորի համար շատ ձեռնտու է  
հիւանդանալը. մի կողմից ծառայութիւնից է  
ազատում, միւս կողմից լաւ էլ կերա-  
կրում են հիւանդանոցում:

— Միթէ սովորաբար վատ է լինում սնունդ-  
ներդ հարցը ես:

— Վատ է: Հաճարի սե, թթու հացը ու-  
տել չի լինում, մանաւանդ մեզ համար, որ  
սովոր ենք ցորեն հացի: Այդ չէ բոլորը, շատ  
անգամ այնպէս խմոր է լինում, որ շան ա-  
ռաջ ձգես, չի ուտելի: Խսկ ինչ վերաբերում  
է կերակրին, նա էլ կեղաստ, անհամ ու ան-

Հոտ մի խառնուրդ է։ Իւրաքանչիւր մարդուն օրէնքի համաձայն պէտք է տրուի քառորդ ֆունտ միս, եթէ ոսկը վրայից հանենք, հազիւ 18 մսխալ է մնում։ Օրէնքը այնքան մեղաւոր չէ, որքան մարդիկ։

— Զմեռն է դժուար ծառայութիւնը, թէ ամառ։

— Իսկապէս ասած, ծառայութիւնը դըժուար է առաջին վեց ամիսը, մինչև զօրավարժութիւնները։ Զմեռն աւելի թեթև է քան թէ ամառը, նախ որ օրը կարճ է և երկրորդ, որ շատ անգամ ցրտերը արգելք են լինում զօրավարժութիւններին։ Զմեռուալ մէկ բանը վատ է, որ քնում ենք փակուած զօրանոցներում, ուր օդը ծանր է ու ապականուած։ Մարդու շունչն է կտրւում ծխած ցած տեսակի ծխախոտի հոտից։ Ամառը շատ լաւ է վրաններում։ Առաւօտուալ մաքուր օդը հրաշալի է. մարդ շնչում է խորը և ազատ դաշտի հազարաւոր ծաղիկների անուշահոտութիւնը։

Մենք մօտենում էինք վրանների շարքերին։ Գրիգորն ու Մանուկը մնաս բարով ասացին ու հեռացան։

Ես նկատեցի Մանուկի աչքերի մէջ արցունքի փայլը։

— Ո՞վ գիտէ, կըտեսնենք նորից, թէ ոչ։

Օրհնիր մեզ, տէր հալր, անվնաս ազատութիւնք ծառայութիւնից, ասաց Մանուկը։

— Աստուած հետներդ, մի վախենաք, ժամանակը շուտ կ'անցնի։

— Խեղճ տղաներ,— ասաց նրանց յետևից իմ ուղեկիցը, որ մինչև ալդ ժամանակ լուռ վկայ էր մեր խօսակցութեանը։

Տղաներով զբաղուած՝ բոլորովին մոռացել էի ուղեկիցիս։

|||

Տղաների հեռանալուց յետոյ մի փոքր նստեցինք հանգստանալու։ Իմ ուշադրութիւնը նրանց կողմն էր։ Ես երկար ժամանակ լուռթեամբ հետևում էի Մանուկին ու Գրիգորին։ Նրանք անցան վրանների երկար շարքերի միջից, ապա ծռուելով գէպի ձախ՛ անցան խոտի դէզի մօտից և ալնուհետեած կուեցին աչքերից։ Տասնիննը տարի ծառայութեան մէջ լինել, ասելն է հեշտ, բայց բնական կեանքի մի երրորդ տեսղութիւնն է կազմում։ Այդքան ժամանակում ո՛րքան չար ու բարի կանցնի։ Իւրաքանչիւր զինւոր ալդ երկար ու ձիգ տարիններում պէտք է մաշուի անյալտութեան մէջ։ Զինւորը միայն կըհասկանայ, թէ ինչ է նշանակում ապրել ահ ու

գողով, մտածել, որ այս տարի, եկող տարի  
կամ հինգ տարուց յետոյ պատերազմ կը ծա-  
գի և ինքն ստիպուած կը լինի կանգնել կրա-  
կի դէմ, շեկացած գնդակի առաջ։ Մանուկը  
վախկոս տղալ չէր, բայց իրաւունք ունէր  
ասելու. «ով գիտէ, կրտեսնուինք նորից»...:  
ի՞նչպէս խորտակուած է միլիոնաւոր մարդ-  
կանց կեանքը։

Իմ մտածմունքներն ընդհատուեցին զին-  
ւորական փողի ձախներով։ Ձախնին հետեւում  
էին մի շարք զինւորներ, որոնք վերադառ-  
նում էին իրանց մտրզանքներից։ Մենք պէտք  
է առաջ գնալինք։ Վեր կացանք տեղերիցո  
և անցանք մի շարք վրանների առաջից։  
Այնտեղ մսուրներին կապած ձիերը կրծում  
էին ծաղկալից չոր խոտը, ոտքերով գետնին  
խփում, իրար էին կծոտում կամ վրնջում։  
Ուղեկիցս օգուտ քաղելով դէպքից, խզեց  
տիրող լրութիւնը։

— Տեսնում ես ի՞նչ լաւ խոտ է։

— Անկասկած խոտի շնորհիւն է, որ ձիերն  
այսպէս չաղացել են,

— Գիտես ի՞նչպիսի հանդ է Եսասաղուլու  
հանդը։

— Լսել եմ այս՝ պտղաբեր տեղ է։

— Լսելը բաւական չէ, վրաբերեց խօսա-  
կիցս, — պէտք է աչքով տեսնել։ Նայիր դի-

մացի սարի լանջը, որ կապտին է տալիս։  
Եսասաղուլ գիւղն այստեղ էր։ Քսան քսան հինգ  
տարի առաջ տէրութիւնը գիւղացոց հանեց  
և նրանց սահմանների մէջ զօրանոցներ շի-  
նեց։ Ափսոս այս հողերին, որ այսպէս ան-  
խնալ զինւորների ոտքերի տակ կոխոտւում է։  
Այս տեղերում բուսած հացի ոյժը, սպիտա-  
կութիւնն ու աճումը գժուար թէ Շորագեա-  
լի միւս մասերում լինի։ Այն օրից, երբ գիւ-  
ղացիներին հանեցին ու միւս գիւղերի մէջ  
ցրուեցին, Եսասաղուլի հանդում էլ ցանքս չի  
լինում։ Գարնան սկզբից մինչև ամառ ար-  
գելուած է այն տեղերում անասուններ արա-  
ծացնելը։ Գաշտն ամբողջ ծածկում է ծաղ-  
կաւէտ խոտերով և տրուում է կապալով, զօր-  
քի ձիերը կերակրելու համար։

— Երեկ շուտով խոտն էլ կըպակասի։

— Իհարկէ, չէ որ հողը ոտքերի տակ ամ-  
րանալով՝ արմատները կը փչանան և էլ խոտ  
չի բռնիլ։

— Գալուստ եղբայր, ասա՞ խնդրեմ, ձեր  
գիւղում իւրաքանչիւր մարդուն ո՞րքան հող  
է հասնում։

— Իւրաքանչիւրին ընկնում է երեք ու-  
կէս կոտատեղ հող, ասաց նա։

— Ի՞նչպէս է կատարւում հողաբաժինը,  
ամեն գերդաստան ունի լաւ հողամաս։

— Հողը տեսակ-տեսակ է—լաւ, միջակ և վաս: Քաղաքում հարստութիւնը հաւասար չէ, գիւղումն էլ հողը հաւասար չէ բաժանուած: Մեծ-հարուստ տները ունին լաւ հողեր, ջրարբի տեղեր, իսկ քչւոր աղքատներն իրանց համեմատութեամբ: Հողը բաժանում ենք մենք, դրա համար էլ ազդեցիկ ընտանիքները միշտ լաւ հողերի տէր են դառնում:

— Ինչո՞ւ համար կառավարութիւնից հողաշափ չէք խնդրում, որ արդար բաժանէ հողը:

— Գիւղի մեծ մասը շատ էլ ցանկանում է: Գարնան սկզբներում համարեա միշտ կուր, անբաւականութիւն է լինում գիւղում. բայց մի կերպ խաղաղում են գիւղացիները և միշտ էլ զրկուածը մնում է զրկուած: Ունեւորները ամեն ջանք գործ են դնում, որ հողը չբաժանուի: Ջատ անդամ դիմել ենք Նահանգապետին, մեծ փողերով հաւատարմատարներ ենք վարձել, որ բողոքներ տան, հասարակութեան պահանջը կատարեն, չի լինում: Հարուստները միշտ էլ կարողանում են քնացնել գանգատները, իսկ մեզ պատասխանում են «Եօլա գնացէք»:

— Ասա, խնդրեմ, քանի՞ կոտ է տանում մի գեսեատին տեղը:

— Վեց կամ եօթը կոտ:

— Բայց ո՞րքան է նստում գիւղացու վրայ

մի կոտի ցանելը:

— Նայելով թէ ինչ տեսակ հողի վրա պէտք է ցանել: Հողը երեք տեսակ է, կայ հերկի հող, կայ հերկոտ և կայ խոզան:

— Հաշուիր առանձին-առանձին:

— Պութանով հերկած արտում մի կոտ հատիկ ցանելու, քաղելու, ծեծելու ծախսն, առանց աշխատանքի՝ նստում է երկու րուբլի, հերկոտի վրայ մի կոտ ցանելու ծախսն արժէ մէկ րուբլի, նոյնքան կ'արժենայ նաև խոզանը:\*)

— Ի՞նչ էք հասկանում ծախս խօսքով, թէ չէք հաշուում մշակի վարձը:

— Ծախս ասելով պէտք է հասկանալ գանձարանին տուած վճարը, արքունի հողից օգտուելու համար, միևնոյն ժամանակ տեղալին վարչական տուրքերը՝ դատարանի, գրադրի, նոյնպէս և գիւղի ծախսերը հողաշափի պահապանների, գզը և այլն:

— Նորհակալ եմ: Այժմ ինձ հասկացրո՛ւ, թէ ինչպէս էք բաժանում ծախսերը ձեր մէջ: Այդտեղ էլ կատարւո՞ւմ է անհաւասրութիւն:

— Լինում է, բայց զգալի չէ: Բոլոր ծախսերը միասին են գումարւում և բաժանւում

\*) Հերկած արտը երկրարդ տարում ցանելիս՝ կոչում է հերկոտ, իսկ խոզան կոչում է միայն արօրով վարած արտը:

են կոտի վրայ, միւնոյն է թէ մարդաթուի վրայ. օրինակ, մի տուն ունի 70 կոտատեղ, ուրեմն պէտք է վճարէ 35 ըուբլի, ուրիշը 50 կոտատեղ, պիտի վճարէ 25 ըուբլի, երրորդը 12 կոտատեղ, վճարելու է 6 ըուբլի: Աղքատները, որոնք կոչւում են մատաղակերներ, ազատ են հարկերից:

— Իսկ ո՞րքան էք ստանում ցանածից արդիւնք:

— Ճիշտ հաշուելը գժուար է, բայց կարելի է մօտաւորապէս ասել: Հերկած հողը, որ տանում է 6-7 կոտ ցորեն, լաւ տարում կըտայ 48-56 կոտ. այսինքն մէկին ութը կոտ. միջակ տարում մէկից ստացւում է 6 կոտ, իսկ վատ տարում, 2-3 կոտ: Հորկոտը լաւ տարում տալիս է մէկին 5-6, միջակ տարում 4-5 կոտ, իսկ վատ տարին 2½-3 կոտ: Խոզանը նոյնքան կըլինի, ինչ որ է հերկոտը:

— Գալուստ եղբայր, այժմ հաշուի առնենք ասածներդ: Դուքս է գալիս, որ գիւղացին մի գեսեատին հողի վրայ ցանում է 6-7 կոտ սերմ և չհաշուելով իւր աշխատանքը, արտը իւր վրայ նստում է 12-14 ըուբլի, որից լաւ տարում ստանում է 48-56 ըուբլի, ցորենի փութը հաշուելով 1 ըուբլի, միջակ տարում 30-36 ըուբլի, իսկ վատ տարում 16 ըուբլի: Հերկոտը և խոզանը՝ լաւ տարում տալիս են

30-42 ըուբլի, միջակում՝ 24-32 ըուբլի. իսկ վատ աարում՝ 16-18 ըուբլի:

— Այս, հաշուից այդպէս է գուրս գալիս, միայն սրա վրայ պէտք է աւելացնել յարդը: Նկատուած է, որ գեսեատինից ստացւում է 10 քմոց յարդ, որը արժէ 2-4 ըուբլի:

— Ապա ո՞րքան է օգտւում քաղաքացին, որ գնում է գիւղացու արտի երեսը ցանելու համար:

Քաղաքացու ստացած օգուտը մեծ չէ: Ե՞հ, մի բան էլ նա է շահւում: Պէտք է նկատել, որ քաղաքացին ինքը չի մշակում հողը, նա այդ գործը կատարում է վարձկանների ձեռքով, բայց ուրիշների ձեռքով կատարած գործից մեծ օգուտ սպասել չի լինում: Նրանք ցանելիս լաւ չեն ցանում, քաղելիս մաքուր չեն քաղում, իսկ ծեծելու ժամանակ անպատճառ գողանում են: Մօտաւորապէս կարելի է ասել, որ քաղաքացու վրայ հերկած արտի կոտը նստում է 4 ը. հերկոտինը 3 ը. իսկ խոզանը 1 ը. 60 կոպ:

— Խօմ չես նեղանում, Գալուստ եղբայր, իմ հետաքրքրութեան մասին. միտայն ճանապարհ ենք գնում, պէտք է մի բան խօսենք: Այժմ ինձ ասա, մէկ գեսեատին խոտատեղից ո՞րքան խոտ է ստացւում:

— Նեղանալու ոչինչ չկայ: Մի բան ինձ զարմացնում է, թէ ինչիդ են պէտք գիւղա-

ցու գործելր: Գիւղացու գործելը գիւղացուն պէտք կըգան և ոչ թէ քաղաքացուն: Դեսեատինից ստացւում է 2 սայլ խոտ. էժան տարում խոտի մի սայլը արժէ 4 ըուր. իսկ վատ տարում՝ 6-7 լուրջի կարժէնալ:

— Բոլոր ասածներիցդ ես եզրակացնում եմ, որ առհասարակ գիւղացին շատ քիչ արդիւնք է ստանում: Երեսի նա ալդ պակասը լրացնում է անսասնապահութիւնով:

— Ալդպէս էլպէտք է լինէր, բայց դժբախտաբար ալդպէս չէ: Խօսք չկայ որ գիւղացին գիւղացի չէ առանց անասունների: Բայց դուք եթէ պատել էք Նիրակում, տեսել էք որևէ գիւղ, որտեղից եթէ ոչ հազարաւոր, գոնէ մի քանի հարիւր գլուխ տաւար, ոչխար գուրս գայ: Տաւար ունենալու համար ամենից առաջ ընդարձակ արօտատեղ պէտք է:

Այն գիւղերը, որոնք ամարանոցներ ունին, նրանք փոքր ի շատէ լաւ են տաւարի կողմից, իսկ միւսները շատ խեղճ են: Միթէ գիւղացութիւն կամ գիւղացի կ'անուանէք, եթէ գիւղում որևէ տուն ունի 5-10 ոչխար, մի կով և կամ մի լուծ եզ: Գիւղում այնպէս տներ կան, որոնք կաթի երես չեն տեսնում և ամբողջ տարին ապրում են առանց թացանի: Իսկ եթէ մի երկու կով էլ ունեցողներ կան, նրանք էլ վերջին նեղութիւնից

ստիպուած՝ իրանց երեխաների բերանից կըտրելով՝ կաթն ու մածունը քաղաք են բերում մի քանի կոպէկով ծախում և գրանով իրանց տան պակասութիւնը հոգում: 0՛հ ծանր է, ծանր է գիւղացու դրութիւնը: Գիւղացին խեղճ է, աղքատ և մերկ:

#### IV

Խօսքի հետընկած՝ մենք աննկատելի կերպով անցնում էինք ճանապարհը: Յանկարծ աչքերս վեր բարձրացնելով՝ զգացինք մեզ խաչ արձանների մօտ: Թէ Երբ և ում ձեռքով են կանգնեցրած խաչ-արձանները, յայտնի չէ, որպէսէտև նրանց վրայ եղած արձանագրութիւնները ժամանակի ընթացքում եղծուել են: Միայն մէկ խաչի թևերի վրայ, սրատես աչքերը կարող են որոշել հետևեալ համտուօտագրութիւնները - Տր. Յո. Քր. Ած.

— Տէր-Յիսուս-Քրիստոս Աստուած: Խաչարձանները շինուած են կարմիր քարերից և դրուած են հաստ քառանկիւնի պատուանդանների վրայ, երեսները դէպի արևմուտք դարձրած: Ալդպիսի մի մեծ արձան էլ կալ հէնց ձորի գլխին, թէք դիրքով, որ կարծես բարձրից իշխում է ձորին: Դաշտում եղածները գուցէ գերեզմանի արձան լինին, իսկ ձորի գլխինը հազիւ թէ գերեզմանաքար հա-

մարուի: Աւելի հաւանական է, որ դրանք կանգնեցրած են որևէ գիւղի կամ իշխանական կալուածքի սահմանները: Հաւանական է կանգնեցրել են Պահլաւունի իշխանները, իրանց հողալին սահմանները որոշելու համար:

Երբ մենք մօտեցանք արձաններին, ուղեկից գիմեց ինձ հետևեալ հարցով:

—Տէր-Հայր, մինչև հիմա դու ինձ էիր հարցնում, հիմա էլ ես կըհարցնեմ քեզ, երազին հաւատում ես:

—Ի՞նչ երազի, ասացի նրան զարմանալով:

—Հենց այնպէս, սովորական երազի, երբ որ մարդ քնի մէջ որևէ երազ է տեսնում, պէտք է արդեօք նրաննշանակութիւն տալ, թէ ոչ:

—Ոչ, երազին հաւատալ չի կարելի:

—Ապա ինչու համար մարդիկ հաւատում են և քնի մէջ տեսած բաներին իրական նշանակութիւն են տալիս:

—Պատճառը պարզ է, որովհետեւ մարդիկ սնահաւատ են և քնի մէջ տեսած երազներին իրական նշանակութիւն են տալիս:

—Ուրեմն դու չես հաւատում, —աւելացրեց նա զարմանալով:

—Այո՛, չեմ հաւատում: Իսկ դու հաւատում ես:

—Հաւատում եմ և այդ ճիշտ է: Դատանգամ երազն այնպէս է կատարւում, որ

կարծես բառացի մտքով առաջուց գըուած լինի: Եփիմերտին էլ այդ բանը պարզ ցոյց կըտայ: Երբ որ մենք երազ ենք տեսնում, տիսուր կամ ուրախ բնաւորութեան, իսկոյն գիմում ենք էփիմերտուն և այնտեղ գտնում ենք բոլոր բացատրութիւնները:

—Լսիր, Գալուստ եղբայր, թէ ինչ բացատրութիւն են տալիս երազին գիտնական մարդիկ: Նրանք ասում են, որ երազները կազմում են խոր քնից լետոյ: Երբ // մենք հետզետէ զարթնում ենք, մեր զգայարանքները, այսինքն, տեսանելիք, լսելիք, և ալլն դրսից, մեր շուրջն եղած առարկաներից տպաւորութիւններ են հասցնում ուղեղին և որովհետեւ քնի մէջ մեր գիտակցութիւնը պղտորուած է լինում, այնպէս որ կատարեալ ու պարզ չի ըմբռնում ստացած տպաւորութիւնները, որոնք ծնուել են ակամայ, երազներին ուղղութիւն են տալիս, մեզ մոլորեցնում են, այնպէս որ մեր երևակայութեան ցնորդները մենք իրականութիւն ենք համարում: Երազի նիւթ կազմում են զգայարանքների հազորդած տպաւորութիւնները, մարմնական պահանջները, օրինակ, երբ քաղցած ենք կամ ծարաւ, կամ երբ աղիքները աղբով են լցուած, կամ երբ ուղում ենք միգել: Երազին նոյնպէս նիւթ տալիս են մեր

մտածողութիւններն ու ձգտումները:

Զգայարանական տպաւորութիւնները, մարմնի պահանջները երբեմն լինում են այնքան կենդանի զօրութեամբ, ինչպէս որ լինում է արթուն ժամանակ, այնպէս որ մենք կարծում ենք, թէ իսկ որ մեր առաջ առարկաներ, անձնաւորութիւններ ենք տեսնում, լսում ենք նրանց ձայնը, հոտոտում կամ ճաշակում ենք։ Նատ անգամ նրանք ունենում են ուղիղ այն լատկութիւնները, ինչ որ մտքի արթուն ժամանակ մենք իմացել ենք. ուրիշ անգամ նրանք լինում են խիստ ալլանդակ, անբնական ձեռվ, միաւորուած իրար հետ ամենատարօրինակ եղանակով։

— Տէր-հայր, թէև բոլոր պատմածներիդ նշանակութիւնը ինձ համար պարզ չէ, այնուամենայնիւ, բաւական հասկանում եմ և համոզուած եմ, որ ճիշտ է, մարմնական պահանջների ժամանակ մարդ երազներ կըտեսնի։

Նա պատմեց թէ ինչպէս մի գիշեր աղի կերակուր ուտելուց յետով, քնի մէջ երազում ջուր է տեսել և իրաւի զարթնելով՝ սաստիկ ծարաւ է զգացել։ Ալդպէս էլ մի անգամ երազի մէջ կերակուր էր տեսել, որովհետև քաղցած էր քնել։

— Ո՞վ գիտէ, — աւելացրեց նա. — ո՞րքան դատարկ բաներ կան, որոնց մենք հաւատ

ենք ընծալում։ Մեր պարզամտութիւնը նրանումն է, որ երազ տեսնելիս, իսկոյն դիմում ենք երազահանի բացատրութեանը, եթէ նա բարի ու լաւ ցոյց տալ, ուրախանում ենք, իսկ եթէ չար ու վատ ցոյց տալ, սկսում ենք տիսրել և օրերով սպասում ենք երազի կատարուելուն։ Հակառակի պէս, մի-մի անգամ նրանք կատարուում էլ են, որից եզրակացնում ենք թէ երազը կատարուեց։

— Ինձ թւում է, որ երազի մասին խօսք բանալիս՝ գու որեւէ բան ունէիր ասելու, ալդպէս չէ արդեօք, — հարցը նրան։

Նա հայեացքն ինձ ուղղեց, ժպտաց բեխերի տակից և ձեռքը մեկնելով դէպի արձանների շուրջն եղած փոսերը, ասաց.

— Տեսնում ես այս փոսերը։

— Երեսի աւելրակներից մնացած փոսեր են։

— Կարծում ես, ոչ։ Այս փոսերը մեր միամիտ գիւղացիների և ձեր խելօք քաղաքացիների շնորհիւն են։ Նրանք երազներ տեսնելով, հաւատացել են երազների իսկութեան մասին և եկել են այս տեղերը փորփռել. որ գանձ գտնեն։ Ես գիտմամբ հարցը քեզ երազի մասին, որ չ'ծիծաղիս պատմելիքներիս վրայ։

— Հաւատում եմ որ հետաքրքիր կըլինին, պատմիր տեսնենք։

— Անցեալ տարիները մեր գիւղում մէկ

պառաւ կին մի երազ էր տեսել. իբր թէ իսչքարից վեց ոտք դէպի աջ գետինը մէկ արշին փորելով, գանձ գտաւ: Նա իւր երազը պատմել էր տանեցիներին, բայց նըանք բանի տեղ չեն դում: Պառաւը նորից միենոյն երազն է տեսնում: Այս անգամ տանեցիները հաւատում են և էֆիմերտուն դիմելով՝ իմանում են, որ երազը բարի է, գանձ կըգտնեն: Միւս օրը, առաւօտը վազ վեր կենալով՝ տան տղամարդիկ բահ ու բըիչ առնելով՝ գալիս են այստեղ և սկսում են փորել. Հէնց այս փոսն է, որ տեսնում ես:

Նա ցոյց տուեց մի մեծ լախ քանդուած փոս:

— Յետո՞յ, — հարցի հետաքրքրուելով: — Երազի մէջ կաը մի փոքր մանրամասնութիւն: Նրանք աշխատանքը պէտք է կատարէին լուռ, անձախն, ուստի փորտմ են առանց ձախի: Որքան և չարչարուում են, ոչինչ չեն գտնում: Կարծելով, որ սխալ են փորել, նորից մի ուրիշ փոս են սկսում քանդել: Այդպէս շարունակում են ամբողջ օրը և նրանց չար բախտից դարձեալ ոչինչ չի դուրս գալիս: Այդ գեռ բաւական չէ: Նրանք աշխատանքի յետեից ընկած՝ մոռանում են ձիուն, որ բերել էին գանձը բառնալու մըտքով: Զին արածելիս կամաց-կամաց հեռա-

նում է ու անյալտանում: Այնուհետև գանձը թողած, ձիուն են պտրում, բայց արդէն ուշ է լինում: Զին կորել էր, իսկ իրանք տփուր-տրտում ուշ գիշերով դարձան գիւղ:

— Տեսնում ես, ասացի նրան, — ժողովրդի սնահաւատութիւնը երբեմն վնաս էլ է տալիս: Նրանք անշուշտ լսած կըլինին, որ աւերակների մէջ հնութիւններ կան, ուստի երազին հաւատալով, եկել են և իզուր տեղը աշխատել:

— Սրա նման մի ուրիշ գէպիք էլ **պատահել** էր մի քաղաքացու հետ, — աւելացրեց խօսակիցս:

— Մէկ օր, բաւականին ուշացած՝ վերագունում էի քաղաքից: Երբ որ հասայ այստեղ, տեսնեմ ինչ որ երկու հսկի աշխատում էին: Իսկոյն լիշեցի գիւղացու հետ պատահած գէպքը և մտքումս ասացի — գտնձի հոտ են առել: Հէնց այն է, ուզեցի նրանց կողմը թեքուել, նրանք այդ նկատելով՝ ձեռքերի գործիքները վայր ձգեցին ու ինձ մօտեցան: Նրանցից մէկը իմ նախածանօթը դուրս եկաւ:

— Այստեղ ինչ էք շինում, ուստա Սարգիս, հարցըի:

Երեւում էր որ նա շատ էլ գոհ չէր ինձ պատահելուց, ուստի շփոթուածի պէս ասաց.

— Քարհանքն էի գնացել, մի քիչ ուշացալ, այնտեղից եմ գալիս:

Ես ծիծաղեցի: Նա էլ զգում էր որ իրան  
ըշհաւատացի, հարցրեց.

— Ինչու համար ես ծիծաղում:

— Նրա համար որ դու սուտ ես խօսում: Հիմա ինչ քարհանքի ժամանակ է, մանաւանդ որ ես տեսայ ձեզ մի փոքր հեռուեց, երբ դուք փորում էիք գետինը: Ի՞նչ գործիքներ էին ձեռքերիդ և ինչու համար այնտեղ թողիք:

— Ծածկելն աւելորդ է, եղբայր, մեղքս ի՞նչ պահեմ: Մեր տղան, ցոյց տուեց նա իւր ընկերոջը, որ մի միջահասակ մարդ էր, մօտ քառասուն տարեկան, անցնող շաբաթ ծածկաբար ինձ ասաց, որ մի երազ է տեսել, իւր թէ այստեղ գանձ է թագնուած: Նա իւր երազը պատմել էր մի պառաւ կնոջ և վերջինս համոզել էր, որ իրաւի, երազում տեսած ճիշտ է, որ գետինը մէկ արշին փորելուց լետով, դուրս կըդայ անտեղից մի մեծ քար, քարի տակ մի պղնձէ խուփ, իսկ տակը մի կարաս, մէջը լիքը ոսկի:

«Երբ որ տղան երազը պատմեց, ես մի փոքը չհաւատացի, բայց նա այնքան էր հաւատացել ճշմարտութեանը, որ ինձ էլ համոզեց և մենք վճռեցինք գալ այստեղ բախտերս փորձելու: Բաւական փորել ենք գետինը, մէկ արշինի տեղ չորս-հինգ փոս փորեցինք, բայց և այնպէս ոչինչ դուրս չեկաւ:

— Սարգիս եղբայր, ասացի, ափսոս որ զուր տեղը չարչարուել էք: Այս տեղերը եթէ գանձ լինէր, մեր գիւղը ձեզանից աւելի մօտ է, մենք վաղուց գանձը դուրս բերած կըլինէինք: Մեր գիւղացիք էլ այւպիսի փորձեր արել են, ու դարձեալ ապարգիւն է անցել ամեն մի փորձ: Դարձէք տուն, դարձէք, եթէ ոչ, գիւղերը դուրսը կըմնաք:

Խեղճ մարդը զզջացած իւր սխալի վրայ, վազեց յետ, վերցրեց թիւկն ու բըհչը, տուն դարձաւ:

— Ամեն տեղ տգէտ մարդը միւնոյն նախապաշարմունքներն ունի, լինի նա գիւղում, թէ քաղաքում,—ասացի ես: Մարդիկ ոչ միայն գանձ գտնելու լուսով զուր կորուրաներ են ունենում, այլ կեանքի շատ խնդիրներում նախապաշարմունքներով լիքը, յետ են մնում և վնասների հանդիպում, հաւատալով զանազան կախարդների, ջագուների: Նոյն իսկ այն դէպքում, երբ պէտք է բըժշկի դիմել հիւանդութեան առաջն առնելու համար, նրանք թլիսմներով ուզում են առողջանալ:

— Ճշմարիտ է, ճշմարիտ,—համաձայնուեց, խօսակիցս,—գլուխներս ցաւի, թէ կուրծքերս, մենք ասում ենք աչքով է տուած, և այդ աչքից ազատուելու համար դիմում ենք պա-

ուաւներին ու ծերունիներին, որ ազօթելով  
մեզ օգնեն: Պատահում են դէպքեր, երբ  
ծննդկանը գժուար է ազատւում, գարձեալ  
պառաւները թիզբաց անելով, կամ մազ պարտ-  
ցնելով, ուզում ենք իմանալ ո՞ր սրբիցն է,  
ինչ չարքի է հանդիպել:

V

Յուլիոնան արեգակն այլող էր: Թէև օրը  
կէր եղել, այնուամենալինիւ դաշտում  
սաստիկ շոգ էր: Գիւղ հասնելու համար գեռ-  
պէտք էր բաւական գնալ: Մենք վճռեցինք  
ձորով գնալ, որ թէև ճանապարհը մի փոքր  
երկարացնում էր, զոնէ շոգից չէինք նեղ-  
ուիլ: Արդէն կանգնած էինք ձորի գլխին:  
Չորի մէջ, կապոյտ ժապաւէնի նման ձգուում  
էր Ախուրեանը: Գետի եղերքը ծածկուած  
էր թաւշեալ նման բաց կանաչով, որտեղ  
արածում էին գիւղի նախիրն ու ոչխարները:  
Հովիւը, ոչխարները ջրի մօտ բերելով, ինքը  
նստել էր քարափի ծմակում ու սրինդ էր  
ածում: Սրնդի ձայնը խիստ դուր եկաւ ինձ,  
մանաւանդ որ վաղուց էր սրնդի ձայն չէի  
լսել: Ընկերս շտապեցրեց ինձ շուտով հով-  
ուի մօտ հասնել, խոստանալով թարմ կաթ  
իմացնել, ծարաւներս կոտրելու համար: Նա

առաջ ընկաւ քարերի մէջ բացուած նեղ  
շաւղով: Իմ դրութիւնը ծիծաղելի էր, չէի  
կարող նրա լետեկց հասնել, այնինչ ինքը  
համարեա թուչում էր: Իւրաքանչիւր քայ-  
լափոխում երերում էի, բաւական էր, որ  
մի փոքր հաւասարակշռութիւնս կորցնէի,  
ոտքո սլկուէր, էլ այնուհետեւ միայն ան-  
գունդի յատակում կարող էի աչքերս բանալ:  
Դողդոջուն քայլերս աւելի էին գժուարացնում  
ոտքերիս տակ ընկած խիճերն ու աւազը:  
Շատ աշխատում էի ուզեկցիս աչքից ծած-  
կել իմ վախը, բայց նանկատում էր այդ և իւր  
առաւելութիւնը զգալով, ծաղրում էր ինձ:

— Սովորել ես քաղաքի հարթ փողոցներում  
շորորալ, գէհ, ինձ նման ցած թոիր: Ամ-  
բողջապէս քրանքի մէջ կորած՝ մեծ գժուա-  
րութեամբ քարերէց կախուելով՝ վերջապէս  
զառիվայրն իջանք ու մօտեցանք հովուին:  
Հովիւը մեզ տեսնելով, սրինգը վերջացրեց,  
ուզզուեց և ոտքի կանգնելով՝ բարեեց: Կըր-  
կին նստեցինք հովուի մօտ հանգստանալու:  
Սաստիկ ծարաւ էի, ջուր ուզեցի խմելու:  
Հովիւը անմիջապէս գուշը ջրով լցրեց, տու-  
եց խմելու:

— Հասօ, ասաց ընկերս, ջրով բան չի գտո-  
նալ, լաւ է մի երկու ոչխար կթես, մի քիչ  
կաթ խմենք:

— Ծարաւս կոտըելուց յետով, այնքան էլ կաթ խմելու ցանկութիւն չունէի, ուստի ասացի:

— Կաթ չեմ ուզում, թող Հասօն մի փոքր սրինգ ածէ, ինձ դուր է գալիս: Հովիւը մի փոքր գժուարանում էր, բայց չուզելով խնդիրս մերժել, նորից սկսեց շուացնել: Նա ածում էր խիստ ոգեւորուած: Երգի տզեցութեամբ սկսեց նրա արեառ դէմքը փայլել: Ի՞նչ էր նրա երգի բովանդակութիւնը, մենք չըգիտէինք, ինքն էլ պարզ չէր կարող հասկանալ: Նա ածելը սովորել էր իւր նման հովիւներից: Երբ արդէն բաւական ածելով լոգնեց, սրինգը վայր դըեց, ես հարցըի.

— Հասօ, այդ ի՞նչ երգ էր որ ածում էիր:

— Մէկ տղալի երգ է, որ սիրած աղջկան փախցնում է սարերը:

— Ապրիս, լաւ ես ածում, — ասաց Գալուստը:

— Գէհ, ածում եմ էլի: Ես այնքան էլ լաւ ածել չըգիտեմ: Աւելի լաւ ածել գիտէ մեր գառնարածը: Լաւ բան է սրինգը: Ամալի դաշտում միակ միսիթարութիւններս այս է: Ոչ միայն մենք ենք միսիթարուում, մեր ոչխարներն էլ սիրում են սրինգի ձայնը: Սրինգի ձայնով իմ ոչխարները ջրի տփն են իջնում, նրանով ես նրանց կարող եմ յետ

կանչել. իսկ երբ ես նկտում եմ ածելու, նրանք էլ շուրջս են հաւաքւում ու լսում են երգս:

— Վաղուց է, որ հովութիւն ես անում,

— Վաղուց, շատ վաղուց: Մազերս սպիտակեցին ոչխարների ու գառների մէջ:

— Երևի շատ ես սիրում ոչխարներին:

— Սիրում եմ որդիներիս պէս և երբ որ ոչխարներիցս մէկը հիւանդանում է, քիչ է մնում խելքս կորցնեմ: Գիտէք, որ ոչխարներն էլ ինձ են սիրում,

— Ի՞նչից գիտես:

— Երբ որ ես քնած եմ լինում, նրանք գալիս են շուրջս, երեսս լիզում, հոտոտում են, ետեւիցս ման են գալիս, իսկ երբ որևէ տեղ եմ գնում, վերագաւնալիս մայելով դէմ են վազում:

— Գարունն աւելի ուրախ ես լինում, այնպէս չէ, Հասօ, այս սիրուն կանաչ դաշտերում, ոչխարներովդ շրջապատուած:

— Օ՞ս, այս: Զմեռն ինձ համար անտանելի է: Այն ժամանակն էլ թէեւ ոչխարների մէջ եմ լինում, բայց գոմերի մէջ փակուած՝ գուրս գալ չի կարելի, Զմեռը ես օրերն եմ համրում, թէ երբ պէտք է գարունը գալ, ձիւնն ու բուքը անցնի, սար ու դաշտ կանաչին ու ծաղկին, որ ես ծաղկապատ դաշ-

տերում խաղամ իմ ոչխարների, նորածին  
գառների հետ։ Գարնոնը ես կարծում եմ,  
թէ ամենից բախտաւոր մարդը ես եմ։

— Ապա վատ, անձրեալին եղանակներին  
վատ չես զգում քեզ։

— Ե՞հ, այդ էլ մի մեծ բան չէ։ Քամուց  
և ամպերի շարժմունքից հասկանում եմ  
փոթորիկը և շտապում եմ հօտս տուն դարձ-  
նել, բայց եթէ ճանապարհին ուշանում եմ,  
կուչ եմ գալիս թաղիքիս մէջ և սպասում  
եմ փոթորկի անցնելուն։ Դժուարը գարնան  
ոկզբներին է լինում, երբ հօտի մէջ կան  
նոր ծնուած գառներ, կամ երբ ոչխարը նոր  
է լինում խուզուած։ Այդ ժամանուկ նրանք  
ցրտից մրսում են ու սատկում։ Միայն ալդ  
միջոցին վատ է մեզ համար։ Բայց մենք  
խօսքի եղանք և կաթ չըխմեցրի։

Այս որ առաց, առանց մեր համաձայնու-  
թիւնն ստանալու, արագութեամբ տեղից վեր  
թռաւ և ընկաւ ոչխարների մէջ։ Նա կթեց  
մի քանի ոչխարներ և կաթի գուշը լցրած՝ ու-  
րախ դէմքով բերեց մեզ մօտ։

— Ավանս որ հաց չունիմ, թէ չէ թարմ  
կաթի մէջ կըրթէիք ու կուտէիք։ Հովուի  
կերածն ալս է մշտապէս։ Ոչինչ, թող Գալօ  
ամին չընեղանալ ու ոչխարը կթելուս հա-  
մար։ Սուտ չեմ առում, բոլորի ոչխարներն

էլ հերթով կթում եմ։

— Ա՛յ փշանալու. — Հանաքով նկատեց ոչ-  
խարի տէրը, գու ամեն օր էլ մեր ոչխար-  
ներն ես կթում, հարսները միշտ զանգատ-  
ւում են, թէ ոչխարների կուրծքը դատարկ է։

— Սուտ են ասում, իմ արևը վկալ, ընդ-  
հակառակը, աւելի քիչ անգամ ձերն եմ կթում.  
բայց նրանք ինձ հետ թշնամացել են, դրա  
համար էլ զրպարտում են, որ աչքից ձգեն ինձ։

— Զլինի թէ մեր հարսների խաթրին դիպել  
ես կամ հայհոյել նրանց։

— Ո՛չ, նրանք ինձանից պահանջում են,  
որ ոչխարները առանձին զոկեմ ու համրան-  
քով փարախը լցնեմ։ Ես էլ ժամանակ չունիմ,  
դրա համար հետս ընկել են։

— Նատ սատանայ քուրդ ես, ասաց Գա-  
լուսը ծիծաղելով, մինչև որ գու հարսների  
խաթրին դիպած չըլինիս, նրանք քեզանից  
չեն զանգատուիլ։

— Հարսներն էլ իրանց հալին չեն կենում,  
նրանք ինձ զալրացնում են, ես էլ հայհոյում  
եմ. թող չսակեն, չըլսեն։

Հովուի ու տիրոջ խօսակցութիւնը ընդ-  
հատեց մի սպիտակ գառ, որ մեզ էր մօտե-  
ցել։ Գառի պարանոցից կապած էր մի կաշուէ  
ժապաւէն, բոժոժներով շարուած, իսկ մէջ  
տեղից կախ էր ընկած փոքրիկ զանգակը։ Հա-

սօն ձեռքը մեկնեց ու գառի գլուխը բռնեց:

— Բոլոր գառներից աւելի սբանէմ սիրում,  
ուր որ գնում եմ, յետևից գալիս է: Քաղ-  
ցած ժամանակը սա մօտենում է ինձ, որ կաթ  
ուտացնեմ: Հէնց որ տեսնում եմ գառս քաղ-  
ցած է, իսկոյն բունում եմ որևէ ոչխարի  
գլուխ և ծծեցնում եմ: Դրանիցն է որ այս-  
պէս գիրացել է:

— Հօտի մէջ քանի գառ ունիս, — հարցը  
նրան:

— Երեսուն հինգ գառ էր, բայց անցած օրը  
մէկն ընկաւ քարից ու ոտքը կոտրեց: Տեսայ  
որ քանի մնայ, պէտք է լզարի ու գուցէ  
սատակի, ծախեցի վանքի ուխտաւորներին:

— Քեզ որտեղից այդքան գառ: Մելիճական  
ոչխարներ էլ ունես, — հարցը նրան:

— Ունեմ: Տասը հատը իմ ոչխարներից են,  
իսկ մնացածը վարձս է:

— Ինչքան վարձ ես ստանում:

— Իւրաքանչիւր տասնուշինգ ոչխարին տա-  
լիս են մի գառ. բացի գրանից ոչխարաւերե-  
ըը հերթով տալիս են հացս ու տրեխներս:

— Ոչխարներդ բաւական շատ են երեսում,  
որքան կըլինին բոլորը:

— Կըլինի երեքհարիւրից աւելի: Ուրիշ  
տարիներ սրանից աւելի կըլինէր, բայց ան-  
ցեալ տարի «դաքաղ» հիւանդութիւնը շատը

կոտորեց, մի մասն էլի՞նախեցին:

— Կորած կամ վնասուած ոչխարի փոխա-  
րէն խոմ վարձդ չեն կտրում:

— Այս, մի մի անգամ կորածների համար  
ստիպուած եմ վարձից զրկուելու. բայց ես  
մեղաւոր չեմ, որ նրանց ոչխարը գիւղի մէջ  
կորչում է, միայն էլի ինձանից են առնում:

— Եթէ ալդպէս չըլինէր, դու մեզ ոչխար  
չէիր թողնիլ, բոլորն էլ ուխտաւորներին  
կըծախէիր, վրաբերեց տէրը:

— Հոգուգ մեղք ես անում, Գալօ ամի,  
ահա քոան տարի է ձեր գիւղում հովիւ եմ,  
այդքան ժամանակում ես քեզանից քանի  
ոչխար կամ գառ եմ կերել:

— Հանաք եմ անում, Հասօ ջան, կերածդ  
հացը հալալ լինի, բոլոր գիւղն էլ շնորհակալ է  
քեզանից. բարով պսակենք, մարդ դառնաս:

— Ես հայի աղջիկ պէտք է տոնեմ: Գի-  
տեմ, քուրդին հայը աղջիկ չի տալ, բայց  
ես հայ կըդառնամ, կըմկըտուիմ հայի պէս:

— Աղջկայ համար ինչո՞ւ ես հայ դառնում,  
քուրդ աղջկայ հետ էլ կարող ես պսակուել,  
նկատեցի ես:

— Չէ, ասքան տարի հայի հաց եմ կերել,  
հայի տուն մեծացել, ես սիրում եմ հայե-  
րին, դրա համար էլ ուզում եմ հայի հաւատ  
ընդունել:

Արդէն բաւական հանգստացել էինք։ Մեզ  
մնում էր շատ չնշին տարածութիւն անց-  
նելու։ Հովուից հեռանալուց առաջ, հանեցի  
նրան մի քանի կոպէկ ընծալելու։ Նա կար-  
ծեց թէ խմած կաթի գին ենք տալիս, չվեր-  
ցրեց ու դարձրեց ասելով.

— Մի աման կաթի համար փող չեն տալ,  
բայց եթէ ուզում էք ինձ լաւութիւն անել,  
տուէք ձեր թաշկինակը, իմը երեկ այս քա-  
րերի մէջ կորաւ։

Ես խոստացայ նրան քաղաքից թաշկինակ  
ուղարկել, երբ որ Գալուստը նորից քաղաք  
գալու լինի, իսկ առայժմ, ասացի, — այս փողը  
տալիս եմ նրան որպէս ընծալ։

Հովիւր շատ ուրախացաւ և երբ մենք հե-  
ռանում էինք, լետեներիցս կանչեց։

— Թաշկինակս չմոռանաս։

— Զէ, Հասօ, չէ, քաղաքից անպատճառ  
կուղարկեմ Գալօ ամու հետ։

— Կարմիր ու մեծ թաշկինակ ուղարկիր, —  
ասաց նա սիրտ առած։ Դրա համար շատ  
շնորհակալ կըլինիմ։

— Լաւ, լաւ, միամիտ կաց, կուղարկեմ  
քեզ համար կարմիր ու մեծ թաշկինակ։

VI

Մենք հեռացանք հովուից, էլ ոչ նա և ոչ  
իւր ոչխարներն էին երեսում։ Արդէն գիւղի  
սահմաններումն էինք։ Մեր ձախ կողմը,  
արտերի միջից գուրս եկան երկու մանկա-  
հաս աղջիկներ, որոնք մի-մի կապ խոտ շա-  
լակած՝ ճանապարհի վրայ ելան։ Նրանք մեզ  
տեսնելուն պէս, քալերը դանդաղեցրին և  
թոյլ տուին որ մենք առաջ ընկնենք։ Իսկ  
երբ արդէն մի երկու քալը առաջ էինք գնա-  
ցել, նրանք սկսեցին բարձր ծիծաղել։ Նրանց  
տլդ տարօրինակ ծիծաղը ինձ շատ զարմացրեց։

— Ինչու ալդպէս լանկարծ ծիծաղեցին  
աղջիկները, հարցը բարեկամիս։

— Ելեսի մի բան մտածեցին։ Գրագ կըգամ,  
որ այդ անպիտանները մեզ վրայ են խօսում։

Բայց մենք ոչինչ առիթ չըտուինք  
նրանց մեզ վրայ ծալլելու համար, — ասացի  
ներքին դժբոհութեամբ։

— Դու չես ճանաչում գիւղի աղջիկներին։  
Նրանք շատ սրատես են և ամենաչնչին եր-  
եսովթն անգամ կարող է նրանց աչքում ծաղ-  
րի նիւթ գտանալ, Այն բարձրահասակ աղ-  
ջիկը լաւտնի է գիւղի մէջ որպէս կատակա-  
սէր ու ծալլող և նրա աչքից ոչինչ չի ծածկւում։

— Ուրախութիւնը սրտէ առանձին լատկութիւն է, որ գժբախտաբար ամեն մարդ չունի: Գա անհատների սեպհականութիւն է և կազ ունի մարդու արեան խառնուրդի և վարած կեանքի հետ: Երբ լուրջ մարդը օրը անցնում է մռայլ ու սե հոգսերով, ուրախ բնաւորութեան տէր մարդը հանաքով ու ծաղրով դիմանում է կեանքի ձախող հանգամանքներին:

Մենք խօսելով հեռանում էինք, բայց աղջիկները շարունակում էին բարձր-բարձր ծիծաղել. մինչեւ անդամ մեր ականջին հասնում էին նրանց հատ-հատ բացականչութիւնները, որոնք իրաւի ուղղուած էին մեր հասցէին: Տիրացու Գալուստն էլ չըհամբերեց, յետ դարձաւ և կծու կերպով յանդիմանեց,

— Այ դուք փշանալուներ, չէք կարող համեստ խօսել և ումն էք ծաղրում: Սոնա, ամօթ չէք քեզ, որ լեզուդ ում վրայ ասես բանեցնում ես:

Սոնան բարձրահասակ աղջիկն էր, որի մասին մի քիչ առաջ ուղեկիցս ասեց թէ կատակամէր է: Նա տեսաւ որ մենք իմացել ենք իրանց խօսքերը, սաստիկ կարմրեց և ուզելով մի կերպ արգարացնել իրանց, ասաց.

— Ով է ձեզ վրայ խօսում, մենք մեզ համար առանձին բան ենք խօսում, ձեզ հետ

ինչ գործ ունինք, որ ձեզ ծաղրենք:

Աղջիկներին անյարմար գրութիւնից հանելու համար, ընկերս թէւից քաշեցի ասելով.

— Թող գրանց, ջահել աղջիկներ են, ով գիտէ ինչի մասին են խօսում, երևի մի առիթ ունին ծիծաղելու, ինչու ես նրանց վիրաւորում:

Գալուստը չըհակառակուեց, յետ դարձաւ և մենք շարունակեցինք մեր խօսակցութիւնը:

— Ո՞քան ազատ են ձեր կանաչք—նկատեցի ես:

— Այն, գիւղում կին մարդն աւելի ազատ է ապրում, քան թէ քաղաքում: Նա գարնան սկզբից մինչեւ աշունք շարունակ դաշտերումն է լինում: Եթէ կինը դաշտում չաշխատի, մեր գործը կըկաղալ, մենք էլ մենակ կըմնանք. իսկ դաշտալին կեանքը ազատ է: Այդ ազատութիւնն է, որ նրանք մի փոքը համարձակ են երևում: Բայց այդ միայն դաշտումն է: Տան մէջ կինը ճնշուած է, օտար տղամարդու հետ չի խօսում և ման է գալիս երեսը ծածկուած:

— Համարձակութիւնը վնաս չունի, միայն թէ իւր վարքն ու բարքը մաքուր լինի:

— Գիւղում երկու տեսակն էլ կալ, ինչպէս և քաղաքում: Վատ կինը ամեն տեղ վատ է, թէ ատնը և թէ գուրսը: Կան շատ

փակուած կանալք, որոնք փախչում են օտար մարդ տեսնելիս, բայց թաքուն այնպիսի վատութիւններ են անում, որոնց մասին խօսելը մեղք է: Բայց գիտես, շատ անգամ կնոջ վատանալու պատճառը ինքը տղամարդըն է: Գիւզում կան այնպիսի տղամարդիկ, որոնք իրանք են կնոջը վատ ճանապարհի վրայ գնում: Այդպիսիններն ապրում են անհաշիւ, օրերը թղթախաղով են անցկացնում, հարբում են և կնոջը ծեծում կամ քաղցած թողնում: Նրանք կնոջը մարդու տեղ չեն դնում, չեն մտածում, որ կինն էլ հողածին է, ուտել, հագնել կուզի: Անառակ մարդկանց կանալք մի, երկու, հինգ տարի համբերելուց յետոյ, վերջապէս մի օր էլ իրանք գալթակլում են ու ընկնում:

— Բայց ես գիտեմ, որ գիւղերում այդ տեսակ երեսլթները բացառիկ գէպքեր կըլինին:

— Այն, հազուադէպէպ են, բայց փոքր գիւղերի մէջ մի երկու գէպքն էլ շատ կ'երևին:

— Իսկ ով են նրանց գալթակղեցնողները:

— Ամեն մարդ: Կնոջ փէշն իրան թշնամի է: Գիւղերում միթէ քիչ ստահակներ կան, որոնք ամբողջ օրերով անգործ ընկած են օդաներում: Նրանք աւելի լիրը, անհոգի մարդիկ են, տղամարդիկ ինեղձանում են այդպիսինների առաջ, իսկ իրանք մի բուռ չամի-

չով, մի թաշկինակով գուրս են քաշում հարս ու աղջիկներին և անբարոյականացնում:

— Աղջիկներ փախցնողներն էլ այդպիսիններն են:

— Այն, հենց գրանք են, որ սիրահարութիւններ են անում աղջկների հետ դաշտերում, գիւզում, գոմերի մէջ և մի գեղեցիկ օր լանկարծ տեսնում ես, որ փախցրեց աղջկան, ու խալտառակեցնրա հօր անունը: Պէտք է ասել, որ վերջերս պակասել է առեանգելու սովորութիւնը, որովհետև հիմա այլևս անպատճի չեն կարող մնալ այդպիսինները:

— Դեռ ևս շարունակուում է գլխագնի վատ սովորութիւնը:

— Միթէ գիւղական սովորութիւնները, վատ թէ լաւ, շուտով կարող են վերանալ: Զէ որ մենք կոշտ ու կոպիտ գիւղացիններ ենք, կարող ենք լետ կենալ մեր տեսածներից: Կամ միթէ կարծում ես, որ քաղաքների պէս աղջկայ ծնողները իրանց զաւակին կարողութեան չափ օժիտ կըտան: Ո՛չ, գիւղում աղջկայ տէրը ուրախ է աղջիկ ունենալու համար: Աղջիկը քանի փոքր է, տէրը նրան բաժին հասանելիք հողից է օգտառմ, իրան էլ տան ծառայութիւններ կատարել տալիս: Իսկ ելք աղջիկը մեծացաւ, մանաւանդ, եթէ նրա բախտից գեղեցիկ եղաւ, նրան թանգ գլխագին

է նշանակում և ով հարուստ է, թո՛ղ առաջ գալ: Ծնողն առանց խղճահարուելու, իւր հարազատին փողով պէտք է ծախէ, առանց հարցնելու տղայի արժանաւորութիւնների մասին:

— Այդ անարդարութիւն է, տմարգութիւն է, Նատ անգամ կարող է մի ստահակ տղայ իւր հարստութեան պատճառով տէր գառնալ աղջկան, գուցէ աղջիկը երբէք էլ նրան չի սիրում:

— Այդուհու էլ լինում է սովորաբար: Վերջերս գիւղում մի գէպք պատահեց, որ քիչ մնաց արիւնահեղութեան պատճառ գառնար: Աղջկայ մէկը սիրահարուած էր գիւղի տղաներից մէկի հետ: Տղան իւր կողմից առաջարկութիւն արաւ և աղջկայ ձեռքը խընդրեց: Հայրը նկատի ունենալով, որ խնդրողը աղքատ տղայ է և չի կարող մեծ գլխագին տալ, մերժեց նրա խնդիրը: Որտեղից որ էր, յանկարծ մի ուրիշ տղայ յալտնուեց և ձեռնտու պայմանով ըստացաւ ծնողի հաճութիւնը, առանց հարցնելու թէ արդեօք աղջիկն էլ համաձայն է այդ տեսակ ամուսնութեան: Աղջիկը լաց եղաւ, խնդրեց, աղաչեց հօրը յետ կենալ ալդ գիտաւորութիւնից, բայց ոչինչ չ'օգնեց: Հայրը իւր խօսքի տէրն էր. նա աղջկան սպառնաց, որ եթէ չհամաձայնի,

կ'սպանէ նրան: Աղջիկը լոեց, վախեցաւ, բայց պսակի գիշերը լաց եղաւ ու ուշաթափուեց:

— Քահանան գիտէր ալդ բանը:

— Ոչ չըգիտէր, իհարկէ եթէ գիտենար, չէր պսակիլ: Վերջապէս ինչ գիտենալու բան է: Դա տնական գաղտնիք է, որ շատ անգամ խեղդւում է չորս պատերի մէջ: Ինչեւիցէ: Պսակուելուց յետով նա երբէք չէր ուղեցել մարդուն ճանաչել և հէնց պսակի գիշերը հիւնդացել էր: Այս անգամն էլ գիւղացին իւր լիմարութիւնով ուղեցաւ հիւնդին բժշկել: Էլ թուղթ ու գիր, էլ ջագու, բոշա չմնաց, որ չըդիմէին, որովհետեւ կարծում էին որ «չարոց» է, տղան թուղթ էր անել տուել, աղջկան հիւնդացը էր:

Պսակուելուց մի ամիս էլ չէր անցել, որ յանկարծ լսեցինք թէ հարսը փախել է իւր սիրած տղայի հետ: Հարսի սկեսրանք և ծնողները գոռում գոշիւնով, հարահրոցով թափուեցին տղայի տունը, որ եթէ բռնէին, կտոր կտոր կանէին:

Գիւղը երկու մաս բաժանուեց, կախւ, հայհոյանք: Տղայի տունը տակն ու վրայ արին, բայց հարսին չգտան: Նրանք փախել անլայտացել էին մի ուրիշ գիւղ, որտեղ մի քահանայ միամտաբար, թէ փողով, պսակել էր նրանց: Երկու օր մաս գալուց յետով, վեր-

Հապէս գտան: Յայտնի բան է երկուսին էլ մի լաւ ծեծելուց, արիւնլուայ անելուց յետոյ բերին Հոգ: Կառավարութիւնը: Աղջիկը կանգնեց և ամենքի ներկայութեամբ ասաց, որ ինքը չի սիրում, չի ճանաշում նախկին ամուսնուն: Բոլոր յորդորն ու համոզելը զուր անցաւ, այնպէս էլ գնաց նա երկրորդ ամուսնու հետ, իսկ առաջինը խնդիր տուեց ամուսնալութեան: Երկրորդ պոտելը մինչեւ օրս էլ մնացել է անվաւեր: Պսակող քահանան պատժուեց, այնու ամենալիւ աղջիկը կենակցում է ապօրինի կերպով իւր սիրած տղայի հետ:

— Յաւալի է: Անշնուշտ այդպիսիները վատ կ'ազգեն գիւղացոց մէջ:

— Եւ իրաւի ազգում են: Կան մարդիկ, որոնք իրանց կնոջից զատ, ապօրինի կենակցութիւններ ունին ուրիշների հետ: Կան և այնպիսիներ, որոնք առանց քաշուելու հասարակաց կարծիքից, հենց իրանց տներն են պահում, թուրքական սովորութեան պէս:

— Բայց ինչպէս է համբերում հասարակութիւնը:

— Հասարակութիւնը չի համբերում, առժամանակ նրանց պախարակում է, նրանց հետ նիստ ու կաց անելուց դադարում է: Նրանք արդարանում են որ կամ կինն է հի-

ւանդ, կամ որդի չունին, դրա համար են բերել տուն: Այսպէս ժամանակ անցնելուց յետոյ, վերջ ի վերջոյ հասարակութիւնը աշքերը փակում է սրանց վերաբերմամբ:

Մենք գիւտենք որ բոլոր չարիքի պատճառը մի կողմից ծնողների կամայականութիւնն է, միւս կողմից գլխագինը: Եթէ ծնողը պսակից առաջ ամուսնացողների յօժարութիւնը հարցնէ, ապագալում ընտանիքի մէջ անհամաձայնութիւններ հազուադէպ կըլինին, և եթէ գլխագինը վերջանալ, ծնողն էլ աղջկան ծախելու միտք չի ունենալ և աղջիկն իւր սիրած՝ հաւանած տղայի հետ ամուսնանալով, աւելի բախտաւոր կըլինի:

Անկասկած, — վրաբերի ես, -- գլխագարձ սէրի վրայ հիմնուած ընտանիքը բախտաւոր կըլինի, ալինին անսէր ամուսնութիւնները միշտ թշուառ վախճան կունենան: Եւ տղամարդն եթէ շուտէ տրամադրւում անբարոյականութեան, հասկանալի է, որովհետեւ հասարակաց կարծիքը նրան շատ չի գատապարտում: Մենք տեսնում ենք կնոջ ընկնելը, պարսաւում ենք նրան, բայց չենք ուզում գաղտնիքների խորը թափանցել նրա ընկնելու պատճառները քննել: Նրա համար թէեւ շատ թանգ է անբիծ անունը, բայց նա արատաւորում է, որովհետեւ ուրիշ ելք չունի, որով-

Հետև մարդիկ սիրտ չունին, նրա զգայուն  
սրտին չեն խօսեցնում:

Արդէն գիւղումն էինք: Խօսակիցս «մնաս  
բարսվ» ասելով՝ ինձանից բաժանուեց դէպ  
իրանց տունը գնալու, իսկ ես տիրացու Գա-  
լուստից ստացածս տեղեկութիւններով հարս-  
տացած՝ քայլերս ուղղեցի իմ ծանօթի տան  
կողմը:

Մինչև տուն մտնելս ես շարունակ ստա-  
ցածս տեղեկութիւնների մասին էի մտածում:  
Գիւղացու կեանքում կան հին ու նոր ցաւեր,  
որոնք ներկայացնում են անհրաժեշտութիւն-  
ներ: Գրանք էական պահանջներ են, որոնք  
աւելորդ տեղը նեղում, խոցոտում են նրան:  
Իսկ թէ ո՞վ, ե՞րբ և ի՞նչ կերպով պէտք է  
շտապել այդ ցաւերի զարգացման առաջն  
առնելու համար, ինքս էլ չէի հասկանում: \*)



\*) Ղանլիճաների նկարագրութիւնը իրանց  
ներկայ և անցեալ տեսակետներով, կարելի է գտնել  
1904 թ. Արարատի մէջ, յուլիս-օգոստոս և սեպտեմ-  
բեր համարներում:

Հայաստանի Ազգային գրադարան



NL0438194

Լ Ս Յ Ա Տ Վ Ա Ն

1. ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ . . . . . գ. 10 կ.
2. ԴԵՂԻՆ ԳԻՄԱԿԱՆՈՐԸ . . . . . գ. 7 կ.

Գինն է 15 կոտ.

Պիյել՝ Ալեքսանդրոպոլ, սվյածնիկу  
հ. Հոկոցյան և Տիլիս՝ «Գուտտենբերգի»  
գրավաճառանոցը:

